№ 43 Շաբաթ Ապրիլի 19 — 1886 — Շաբաթ Ապրիլի 19 № 43

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Армянская газета

«М Ш А К Ъ»

Принимаетъ объявленія на *армянскомъ*, *русскомъ* и *иностранныхъ* языкахъ.
Плата за объявленія: 2 копѣйки со слова. Съ объявленій печатаемыхъ не менѣе *десяти* разъ, дѣлается скидка на половину.
Адресъ: ТИФЛИСЪ, редакція газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա. Նամակ Եգիպտոսից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Ապրիլի 4-ին

Անցեալ անգամ խօսելով Բաթումից արտահանվող ցորենի քանակութեան մասին, ես ասեցի որ օրական, միջին թւով, 15 վագոն ցորեն է ներմուծվում տեղս և վաճառվում, սակայն ես այդ քանակութիւնը ցոյց տուի միմիայն այն մըտքով, որ չափազանցութիւն չերևայ ասածս, որովհետև տեղս ներմուծվող ցորենի իսկական քանակութիւնը շատ աւելի է 15 վագոնից, այնպէս որ միջին թիւ կարելի է ընդունել 20 մինչև 25 վագոն։ Ի հարկէ, սա մի չնչին քանակութիւն է, եթէ համեմատենք Ռուսաստանի Սև ծովեղերեայ քաղաքներից արտահանվող ցորենի քանակութեան հետ, բայց ի նկատի առնելով որ ընդամէնն դեռևս հազիւ մի տարի է, որ սկսվել է այստեղ ցորենի առևտուրը՝ կարելի է յուսալ, որ մօտ ապագայում մեծ ընդարձակութիւն կը ստանայ այս առևտուրը և այդպիսով էլ մեծ զարկ կը տայ մեր երկրի տնտեսական դրութեան։

Այնուհետև խօսելով տեղիս ցորենի առևտրին բարենպաստ և արգելառիթ հանգամանքների մասին, ես, նամակս չափազանց չերկարացնելու պատճառով, զանց էի արել մի այլ կարևոր հանգամանք, այն է քաղաքիս մէջ պահեստների համար չինութիւնների պակասութիւնը, որով մեծ դժուարութիւններ են կրում ցորենի առևտրով պարապողները, մանաւանդ Բաթումի պէս տեղում, ուր անձրևները համարեա թէ անընդհատ են լինում։ Պահեստներ չը լինելու պատճառով, շատ անգամ օդի դրութիւնը ազդեցութիւն է ունենում ցորենի առևտրի տրամադրութեան վրա։ Զարմանալի է, որ տեղիս կալուածատէրերը ուշադրութիւն չեն դարձնում այս հանգամանքի վրա։

Բացի այդ, արդէն ամենուրեք ճանաչված է առևտրական յարաբերութիւնների համար բանկերի մատուցած դիւրութիւնները, բայց Բաթումը այդ կողմանէ զուրկ է կատարելապէս, որով շատ անգամ մեծ դժուարութիւնների են հանդիպում այստեղի վաճառականները։ Այստեղ խիստ զգալի է մի որ և իցէ բանկի կարևորութիւնը։ Այդ տեսակ մի հիմնարկութիւն մեծ դիւրութիւններ կը տար տեղիս վաճառականներին իրանց առևտրական գործողութիւնների մէջ և դորանով էլ, հետևաբար, շատ նպաստաւոր կը լինէր տեղիս վաճառականութեան։ Բացի վաճառականներից, այդ տեսակ հիմնարկութիւնը մի անպատմելի բարիք կը լինէր տեղիս բազմաթիւ մշակ և արուեստաւոր դասի համար, աւանդ առնելով և չահեցնելով նրանց ծանր աշխատութեանց արդիւնքը։

Սակայն քանի որ մի բանկային հիմնարկութիւն բանալը ունի իր դժուարութիւնները և ժամանակի է կարօտ, այդ պատճառով շատ ցանկալի կը լինէր, որ գէթ կառավարութիւնը օգնութեան հասնէր այստեղի մշակ և արուեստաւոր դասին՝ տեղիս գանձարանին կից խնայողական կ ա ս ս ա բանալով նրանց համար։

Քաղաքիս յոյն վաճառականների մէջ միտք էր ծագել ցունաստանի ազատութեան տարեդարձի օրը, անցեալ ամսի 25-ին, տօնել մի աղդասիրական վսեմ գործով։ Այդ նպատակի համար ստորագրութիւն էին բացել, որպէս զի հանդանակված դումարը ուղարկէին ցունաստան պատերազմի առթիւ զօրքերի պիտոյքները հոգալու։ Սկզբում մեծ եռանդով սկսեցին վերաբերվիլ դէպի այդ գործը. խօսում էին ոգևորված, առատօրէն ստորագրութիւններ էին տալիս, այնպէս որ մի ճաշարանի (ռէստորանի) խոհարար հինգ ոսկի էր նուիրել իր գրպանից, սակայն այդ բոլոր ոգևորութիւնը վերջացաւ միայն մի փարթամ ճաշկերոյթով, որ պատրաստել էին տուել տեղիս մի հիւրանոցի մէջ։

Գ.

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Моск. Вѣд. լրագիրը հաղորդում է, որ շուտով կը հաստատվի գիւղատնտեսական ընկերութիւններին վերաբերեալ կանոնադրութիւնը, որի նպատակն է նահանգների և գաւառների մէջ այդպիսի ընկերութիւններ և ժողովներ հաստատելը հեշտացնել։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներքին գործոց նախարարութիւնը ներկայացրել է պետական խորհրդին մի նախագիծ, Պետերբուրգում ժամանակաւոր տեխնիկական դպրոց հիմնելու հեռագրատների ծառայողների համար։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Տեղիս մանր կապիտալիստների մէջ սկսվել է սովորական անմիտ և թշնամական մրցումը։ Անցեալ աշնան բրդի առևտրի փոքր ի շատէ աջող լինելը այսօր ամենքին բուրդ գնող է դարձրել։ Առանց շրջանկատ լինելու և ունեցած միջոցներին համապատասխան գործ սկսելու կը տեսնէք որ 500 ռուբլի դրամագլուխ ունեցող վաճառականը մրցել է ուղում 100 հազարներ ունեցող ընկերութիւնների հետ։ Տարաբաղդաբար նոյն երևոյթը նկատելի է մեր վաճառականների ամեն գործունէութեան մէջ, որի ուղղակի հետևանքն են այն բազմաթիւ գանգատները և անաջողութիւնները, որոնց մասին միշտ լսվում է և խօսվում է այստեղ։»

—

Գարեգին վարդապետ Սաթունեան, ինչպէս մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ, մեծ պասին իր խօսած մի շարք քարոզներով մխիթարիչ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա։ «Այդ քարոզները զերծ լինելով սովորական վերացական առասպելաբանութիւններից և ճռճռան ֆրազներից, արտայայտում էին ժողովրդի ներկայ կեանքի պատկերը հաճելի և անհաճոյ կողմերով, մի և նոյն ժամանակ ցոյց տալով լսողներին այն ընթացքը, որով պէտք է ընթանալ կեանքի մէջ։ Այդ տեսակ գեղեցիկ և հետաքրքիր քարոզներ ճշմարիտ է որ կարող են պահանջ դառնալ ժողովրդի համար։»

—

«Մշակի» անցեալ 42-որդ համարում տպված «Պաշտօնական տեղեկութիւն» վերնագրով յօդուածում մտան հետևեալ տպագրական սխալները։ Առաջին երեսի վրա տպված է, (1-ն յուլիսի 1884 թվի), բայց պէտք է լինէր (1-ն յունիսի 1884 թվի)։ Վերջին սիւնակի մէջ տպված է. 1873-ին հոկտեմբերի 14-ին և 1874-ին մարտի 7-ին։ Բայց պէտք է լինէր. 1883-ին հոկտեմբերի 14-ին և 1884-ին մարտի 7-ին։

—

Սուրամի անցքի չինութեան մասին կազմված մինիստրական մասնաժողովը որոշել է Սուրամի անցքի չինութիւնը համարել անյետաձգելի և միջոցներ ձեռք առնել, որպէս զի անցքի չինութիւնը պատրաստ լինի անպատճառ մինչև չորս տարի։ Այդ որոշումը, ինչպէս հաղորդում է «Русскій Курьеръ» լրագիրը, ներկայացրած է այժմ պետական խորհրդի հաստատութեանը։ Անցքի չինութեան ծախսը կը լինի մօտ 10,574,000 ռուբլի։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ յայտնի ճանապարհորդ դոկտոր Ելիսէեվ այս ամառը ճանապարհորդելու է Փոքր-Ասիայում։

—

Լսում ենք որ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեան շուտով նշանակվելու է Թավրիզի և Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ։

—

Զորեքշաբթի օր, 16-ին ապրիլի ԹԻՖԼԻՍԻ թատրոնում կայացաւ պ. Զ է զ ի ի և օրիորդ Ալիս Բ ա ր բ ի ի կօնցերտը։ Պ. Զէզի ածում է պիանօի վրա, իսկ օրիորդը երգում է։ Վաղուց է արդէն մենք և մեզ հետ և Թիֆլիսի ամբողջ հասարակութիւնը այդքան նուրբ գեղարուեստական վայելչութիւն չենք ունեցել, որքան ապրիլի 16-ի կօնցերտում։ Թէ պ. Զէզի և թէ օրիորդ Բարբի մեծ մասամբ կատարում են կլասիկային երաժշտութեան ու երգեցողութեան պիէսաները, որոնք պատկանում են անցեալ 18-որդ և նոյն իսկ 17-դ դարին։ Օրիորդը անմման կերպով երգեց Բէթովէնի «Ah perfido» արիան, այնուհետև Բուռնոնչինիի արիան (որ ապրում էր 1672—1762 թվերում), յետոյ Պերգոլէզէի «Se tu m'ami» (1710—1736) և Իոմէլլիի (1714—1874) «La Calandrina» երգը։ Միայն կօնցերտի վերջում նա կատարեց նոյնքան աջողութեամբ նոր դպրոցի երգեցողութեան կտորներ, ինչպէս Շուբերտի «Trockene Blumen» և «Haidenröslein» (գերմաներէն լեզուով) երգերը և Մասսէնէի «Nuit d'Espagne» (ֆրանսերէն լեզուով)։ Օրիորդի ձայնը վերին աստիճանի մշակված է և նրա ձայնի ամբողջ բէդիստրը հաւասար կերպով զարգացած է։ Մեզ շատ քիչ է պատահել լսել մի երգչուհուն որ մի և նոյն ժամանակ այդքան շնորհով երգէր։ Նրա երգելու ձևերն էլ անհանդիմանելի են։ Պ. Զէզի իր ածելու մաքրութեան, տուչէի քնքշութեան և վերին աստիճանի զարգացած մեքանիզմի կողմից առաջնակարգ ածողներից կարող է համարվել։ Նրա բէպերտուարն էլ նոյնպէս մեծ մասամբ բաղկացած է անցեալ և 17-որդ դարի երաժշտական հեղինակութիւններից, որոնց հասարակութիւնը շատ հաղիւ առիթ ունենալով լսելու, այդ պատմական գրուածները ներկայացնում են լսողին նորութեան վայելչութիւն։ Զէզիի մատների մեքանիզմի անլսելի զարգացումը և նրա տուչէի քնքշութիւնը մանաւանդ երևացին նրա ածած Կուպէրէնի (1668—1733) «Les Bergeries» պիէսայում և Հէնդէլի (1685—1759) «Գաւոտի» մէջ։ Բայց կօնցերտի վերջում իր ածած Թալբէրգի «Բալլադայի» և Բուբենչտէյնի «Էտիւդի» մէջ տաղանդաւոր պիանիստը ցոյց տուեց իր ամբողջ տաղանդը և իր մատների սարսափելի մեքանիզմը և նրանց ամբողջ ոյժը։

—

Ռուսաց ս. Սինոդի կարգադրութեամբ, ինչպէս հաղորդում է մեզ «Հիւսիսային գործակալութիւնը», ռուսաց հոգևոր-ծխական դպրոցների աշակերտները, որոնք ներկայ ուսումնական տարում աւարտել են իրանց ուսման ընթացքը, զինուորագրութեան չորրորդ կարգի արտօնութիւն ունենալու վկայական ստանալու համար կարող են քննութիւն տալ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան այն քննիչ յանձնաժողովներում, ուր նրանց համար յարմար կը լինի ներկայանալ, կամ թէ կարող են քննութիւն տալ եկող ուսումնական տարվայ սկզբին, այն նոր կանոնների հիման վրա, որ կը յայտարարի թեմական ուսումնարանական խորհուրդը։

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ հետևեալը։ «Новое Время» լրագիրը հաղորդում է որ բանտորներին վարձելու և բանտորների ու նրանց վարձողների մէջ եղած յարաբերութիւնների վերաբերեալ կանոնների նախագծի հետ միաժամանակ քննվում է տէրութեան բարձրագոյն շրջաններում և գործարանների տեսուչների թիւը աւելացնելու հարցը, որովհետև դրանց գործունէութեան շրջանը շատ կընդարձակվի նրանով, որ այդ տեսուչները կը հսկեն բանտորներին վարձելու կանոնների կատարման վրա և վարձողների ու բանտորների մէջ եղած վէճերը նախ և առաջ դրանք կը քննեն։ Բացի սրանից վերոյիշեալ կանոնները գործարաններում մտցնելու հետ միասին կը հիմնվեն գործարանական գործերին վերաբերեալ առանձին նահանգական ատեաններ, գործարաններում բարեկարգութեան և կարգի վրա վերահսկելու համար։

—

«С.-Петербургск. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ Ռուսաստանի մ ի ս ը Լիբավան և Բէվէլեան նաւահանգիստների միջոցով Անգլիա արտահանելը խրախուսելու համար պետական կայքերի մինիստրութիւնը յանձն է առնում Լիբավայի համար նաւեր վարձելու ծախսի կէսը, իսկ Բէվէլի համար լրացուցիչ վճար, ոչ բարձր 5 ռուբլուց իւրաքանչիւր կենդանու վրա և 2,500 ռուբլի ամբողջ նաւաբեռնի համար, եթէ ուղարկողները կը ստանան 7 կօպէկից պակաս մսի իւրաքանչիւր ֆունտից։

—

ԿԱԶԱՆԻ փոխադարձ հողային կրեդիտի ընկերութեան նահանգական ժողովը այս օրերս վճռեց 54 ձայների մեծամասնութեամբ 29 ձայնի դէմ միջնորդել ընկերութեան բոլոր փոխառուների իրաւունքները հաւասարացնելու մասին, որպէս զի աղնուականները իրաւունք ստանան ծախելու կայքերը ոչ-աղնուականների վրա, այն պարտքերի փոխադրութեամբ, որ առել են հողային փոխադարձ կրեդիտի ընկերութիւնից։

—

ՆՈՒԽՈՒ երկու ուսուցիչներ, պ. պ. Ց. Այվազեանց և Գրիգոր Եարալեանց, խնդրում են մեզ տպել հետևեալը։ «Մշակի» ներքին լուրերում կարդացինք Նուխու երկու ուսուցիչների կողմից հրապարակական բողոքը, իրանց ռոճիկները մինչև այժմ չը ստանալու պատճառով, չը նայելով ս. Սինոդի կողմից արած կարգադրութեանը։ Թէև մենք երկուսս էլ Նուխու այն ուսուցիչներից ենք, որոնք նոյնպէս իրանց ռոճիկը դեռ ևս չեն ստացել, բայց և այնպէս հարկաւոր ենք համարում յայտնելու, որ վերոյիշեալ լուրի հեղինակը մենք չենք։»

—

«Русскій Курьеръ» լրագրի վերջին համարներից մէկում տպված է մի թղթակցութիւն Վաղարշապատից, որի մէջ թղթակիցը յիշելով որ Կովկասի զանազան կողմերում գտնվող մշակների 70%—80% կազմում են Թիւրքիայից եկած հայերը, և չնչտելով դրանց ողորմելի դրութեան վրա, մի ակնարկ է գցում վերջին ռուս-թիւրքական պատերազմից յետոյ տեղի ունեցած քաղաքական անցքերի վրա, յիշելով Բերլինի կօնգրեսը, Ռուսաստանի և Անգլիայի յարաբերութիւնները դէպի Թիւրքիան և վերջինիս բռնած ընթացքը իր ասիական գաւառների վերաբերմամբ։

—

Պետական կալուածների մինիստրութիւնը մշակել է հետևեալ կէտերը պարունակող մի նախագիծ. ա) այն նահանգներում, որոնք յարմար են այգեգործութեան համար, հիմնել տարրական ուսումնարաններ մինիստրութեան հաշվով. բ) տեղական կարիքների համեմատ նշանակել իւրաքան-

չիր ուսումնարանում համապատասխան թւով աշակերտներ. գ) աւարտող աշակերտներին տալ մի քանի արտօնութիւններ գլխաւորապէս զինուորագրութեան վերաբերմամբ. դ) ուսման ժամանակ դասական պիտոյքները ձրի մատակարարել աշակերտներին։ Այդպիսով ուսումնարանների տեսուչներ և դասատուներ պատրաստելու համար դիտաւորութիւն կայ հիմնել Պետերբուրգում առանձին կուրսեր, բնական գիտութիւնները և այգեգործութիւնը թէ գործնականապէս և թէ տեսականապէս ուսումնասիրելու համար։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Վերջին ժամանակները անձրևը անդադար տեղում է. շրջակայ սարերը ձիւնով ծածկվել են։ Քիչի սարերի վրա դիզված ձիւնը վատ ապագայ է գուշակում։ Անցեալում տեղի ունեցած հեղեղը աւելի ահռելի կերպարանքով է նախատեսվում. ժողովուրդը դրա մէջ կարծես համոզված է։ Սպառնացող վտանգին առաջն առնելու համար վաղուց անհրաժեշտ է համարվել քաղաքի և գետի սահմանագծի վրա պատնէշ կանգնեցնել։ Սակայն տարաբաղդաբար այդ միտքը մինչև այժմս էլ անիրագործելի է մնացել չնորհիւ քաղաքային հասարակութեան, մանաւանդ հայերի մէջ տիրող անհամաձայնութեան։ Ամբողջ հոգացողութիւնը և ծախսը պատնէշի շինութեան ուղում են թողնել գետի եզրում բնակվողների վրա, որոնց նիւթական ոյժից միանգամայն վեր է պատնէշ կանգնեցնելը։ Վերջապէս ի նկատի ունենալով գետի դիրքը և ջրերի յաճախ յորդանալը, հաստատ կարելի է ասել որ քաղաքին սպառնացող վտանգը անխուսափելի է, եթէ քաղաքացիք նախօրօք ձեռք չառնեն անհրաժեշտ միջոցների։»

—

Մեր թղթակիցը գրում է մեզ ԳՕՐԻ քաղաքից հետևեալը։ «Այստեղ այժմ թանգութիւն է տիրում։ Թէև այս տարի ամեն ինչ առատ է, բայց քաղաքը լի է պօդրադչիկներով (չարչիներով), որոնք մեծ քանակութեամբ ցորեն, գարի, եղիպտացորեն (սիմինդր) են առնում և տանում են այլ տեղեր։ Այժմ այստեղ ցորենի պուդն արժէ 80 կոպէկ, գարին 55 կ., սիմինդր 48 կ., ալիւրի պուդը 90 կոպէկ։ Զորս հատ ձու արժեն 5 կոպ.։ Իսկ եթէ չարչիներ չը լինէին, ամեն բան էժան կը լինէր։ Մեր գօրեցիների համար օրական ծախսի մի նոր աղբիւրն էլ աւելացաւ. մինչև այժմ ֆաէտոնով, սայլով, ձիով անցուդարձ անողները անվարձ էին անցնում կամուրջի վրայով,—իսկ այժմ կամուրջն անցնելու համար էլ ամեն անգամ փող պէտք է վճարել։ Այդ կարգադրութիւնը մտցնվեցաւ մարտ ամսի 1-ից ներկայ 1886 թ.։»

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեր թղթակիցը մեզ հաղորդում է հետևեալը։ «Այստեղի հայոց հասարակութեան շրջաններում դիտաւորութիւն է ծագել մի առանձին «կլուբ» ունենալ, որտեղ միջոց կը լինի մայրաքաղաքի հայ հասարակութեան անդամներին ամեն օր միասին հաւաքվելու, այդ ժողովարանում հայերէն գրադարան-ընթերցարան հիմնելու, որտեղ ուսանողները հասարակութեան հետ կը շփվեն, կը դատեն, կը կարդան և գոնէ մասամբ կը ծանօթանան կեանքի հետ։»

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են։ «Մեր բանաւոր գրականութիւնը աղքատ է, եղածն էլ ժողոված ու գրի անցած չէ, գրածն էլ մշակված և ուսումնասիրած չէ։ Այժմ արդէն, թէև վերին աստիճանի թոյլ կերպով և սակաւ թւով, մարդիկ սկսել են հաւաքել մեր անցեալ կեանքի կենդանի պատմութեան փաստերը։ Այդ պատճառով այժմ պ. Գրիգոր Խալաթեանի մատրված գործը կարևոր է և համապատասխան հանգամանքներին։ Թէև արդարև հայր Սրուանձտեանի, պ.պ. Միրախորեանի, Տ. Նաւասարդեանի, Շերէնցի հաւաքվածները դեռ բաւական չեն մի յայտնի ժամանակամիջոցի լիակատար պատկերը ուսումնասիրելու համար, սակայն եղածի հիման վրա պ. Խալաթեան կարող է արդէն մի քանի եզրակացութիւններ անել նրանց ծագման և ներքին բովանդակութեան մասին, մի և նոյն ժամանակ իր ձեռնարկած աշխատանքով խրախուսել ժողովրդական բանաւոր յիշատակների, աւանդութիւնների, լեգէնդների, առակների և հեքիաթների հաւաքողներին աւելի եռանդով տանել իրանց սկսած գործը։ Ի նկատի առնելով պ. Խալաթեանի ձեռնարկութեան և այն նշանակութիւնը, որ այս կերպով նա կը կարողանայ ձեռքի տակ ունեցած նիւթերի մասին հաղորդել և ռուս գիտնականներին,—մենք մեր կողմից չենք կարող չը համակրել Խալաթեանի ըսկսած գործին և չը ցանկանալ նրան կատարեալ աջողութիւն։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են։ «Այն ուսումնական մանաժողովը, որ կազմված է Էջմիածնում և որ բաղկացած է մեր մի քանի մանկավարժներից, նախագահութեամբ Մեսրովբ եպիս. Սմբատեանցի, մշակելով հայոց ուսումնարանների համար ուսումնական պրօգրամը, դիտաւորութիւն ունի, ինչպէս ասում են, Գէորգեան ճեմարանի և Ներսիսեան դպրոցի համար ռուսաց հոգևոր սեմինարիաների իրաւունքները խնդրել, հետևաբար վերջիններիս ծրագիրը համարեա ամբողջապէս պիտի ընդունի, այսինքն այժմեան եղած առարկաների վրա պիտի աւելացնի հին կլասիկային լեզուներից գոնէ մինը, կամ գուցէ երկուսն էլ։ Բայց յայտնի է որ վերջին ժամանակներս ռուսաց մամուլը անդադար մատնացոյց էր անում ռուսաց սեմինարիաների ծրագրի մի մեծ պակասութեան վրա, այն է բժշկական գիտութեան (ի հարկէ տարրական ծրագրով) բացակայութեան վրա։ Այժմ մայրաքաղաքների լրագիրները հաղորդում են որ Կիևի հոգևոր Սեմինարիան ստացել է թոյլատրութիւն երկու բարձր (V և VI) դասատներում աւանդել ուսանողներին ժողովրդական (պօպուլէր) ծրագրով բժշկականութեան վերաբերեալ նախագիտելիքները։ Շատ խելացի կը լինէր եթէ Վաղարշապատի ուսումնական մասնաժողովի պատուելի անդամները մտցնէին իրանց պրօգրամայի մէջ այս առարկան ևս։ Եւ այս պատճառով եթէ պարտաւոր են պրօգրամայի մէջ մտցնել յունաց կամ լատինական լեզուն, աւելի լաւ է եթէ մտցնէին երկրորդը քան առաջինը, որովհետև դա օժանդակիչ կը լինէր բժշկական նախագիտելիքների դասատուութեանը։ Առհասարակ շատ լաւ կը լինէր որ վերացական գիտութիւնները փոքր ինչ տեղ տային պրօգրամայի մէջ բժշկականութեան, գիւղատնտեսական և բնական գիտութիւնների դասաւանդութեանը։ Զը մոռանանք, որ թէ ճեմարանը և թէ Ներսիսեան դըպրոցը նպատակ ունեն քահանաներ պատրաստել, իսկ քահանան, մանաւանդ գիւղականը, թողնելով դպրոցական թէօրիաները և շփվելով կեանքի իրականութեան հետ, մեծ մասամբ ստիպված է լինում իր խորհրդներով իր հօտի ուղեցոյց լինել նրա գիւղական, տնտեսական կեանքում. շատ անգամ նրանից ակնկալութիւն ունի գիւղացին որ իր հոգևոր հայրը ոչ թէ միայն իր հոգու բժիշկ լինի, բայց և որպէս ամենագէտ մարդուց օգնութիւն է սպասում իրան իր մարմնի տկարութեան ժամանակ, գէթ մի քանի օգտաւէտ խորհրդներով։ Իսկ քահանան ոչինչ խորհուրդ տալ չէ կարող, բացի մի քանի հմայական միջոցներից, քանի որ նա ոչ թէ միայն բժշկական ոչինչ նախագիտելիք չունի, բայց և ամենևին տեղեկութիւն չունի մարդու կազմուածքի մասին, մարմնի անատոմիական կազմակերպութեան և նրա ֆիզիօլոգիական գործակատարութիւնների մասին ամենատարրական հասկացողութիւն էլ չունի։»

—

«Ռէյտերի գործակալութիւնը» Պոլսից հաղորդում է «Новое Время» լրագրին, որ Կ. Պոլսի հայոց Ազգային Ժողովը ընտրեց երկու յանձնաժողով։ Այդ յանձնաժողովներից մէկը պէտք է մըշակէ այն հարցը թէ ինչ փոփոխութիւններ պէտք է մտցնվեն «Պոլօժենիայի» մէջ։ Յանձնաժողովի եզրակացութիւնը կուղարկվի հայոց Կաթողիկոսին մի նամակի հետ միասին, որով կը խնդրվի Կաթողիկոսից ներկայացնել հայերի ցանկութիւնը ռուսաց կառավարութեան հայեցողութեանը։ Միւս յանձնաժողովը կը զբաղվի այն հարցով, թէ ինչ փոփոխութիւններ պէտք է մտցնվեն թիւրքա-հայոց ազգային սահմանադրութեան մէջ։ Այդ առաջադրութիւնը կը ներկայացնվի թիւրքաց կառավարութեանը՝ դրան ընդունելու խնդրագրի հետ միասին։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական հասարակական կարծիքը, մամուլը, քաղաքականութիւնը ներկայումս զբաղված են միայն մի խնդրով. ամենքի հետաքրքրութեան և խօսակցութեան նիւթը Իրլանդիան է, դարերով մոռացված և արհամարհված Իրլանդիան։ Անգլիայի պատմութեան համար վերջին շրջանը բաց է անում մի հետաքրքիր ասպարէզ, որի վրա առանձին ուշադրութեամբ կանգ կառնի մօտիկ ապագան։ Գլադստոն իր համարձակ և արմատական նախագծով, և միւս կողմից Պարնէլը իր կուսակցութեամբ կանգնած են դէմ—յանդիման ոչ միայն պահպանողական կուսակցութեան, այլ և ազատամիտ կուսակցութեան, մամուլի և ժողովրդի առջև։ Լարված ուշադրութեամբ դիտում են ամենքը։ Առաջին քայլը արդէն արած է։ Իրլանդական պարլամենտի հաստատութեան և Իրլանդիայի հողերը յետգնելու նախագիծը առաջին ընթերցման մէջ ընդունվեցաւ համայնքների ժողովի կողմից։ Երկրորդ ընթերցումը յետաձգուած է։

Երկար տարիներից ՝ի վեր անգլիական պարլամենտի ժողովարանը չէր ներկայացնում այնպիսի տեսարան, որպէս մարտի 27-ին էր (ապրիլի 8-ին)։ Վաղ առաւօտեան բոլոր պատգամաւորները եկել էին, տեղեր բռնելու համար։ Պարնելիստները իրանց բոլոր ոյժով ներկայ էին։ Ժողովրդի ահագին բազմութիւն խռնված էր շինութեան առջև լայն փողոցի վրա։ Լարված ուշադրութեան և խորին լռութեան ժամանակ Գլադստոն բարձրացաւ իր տեղից և սկսեց պարզել և բացատրել իր նախագիծը։ «Երկրի և պարլամենտի պատիւը պահանջում է, ասեց Գլադստոն, վերջ տալ չուտով իրլանդական հարցին. Իրլանդիայի դրութիւնը բարւոքելու և խաղաղութիւն պահպանելու նպատակով մինչև այժմ գործ դրված միջոցները ցանկացած կէտին չը հասցրին։ Շատ միջոցներ են գործ դրված, բայց միշտ մոռացվել է մի միջոց. այն է որ երբէք չէ փորձված տալու իրլանդական օրէնքներին ոչ թէ օտար, այլ բուն իրլանդական բնաւորութիւն։ Իրլանդիան իր այժմեան օրէնքները օտար է համարում։ Պէտք է ժողովուրդը սէր և յարգանք ունենայ դէպի օրէնքը»։ Դրանից յետոյ Գլադստոնը բացատրեց իրլանդական պարլամենտի նշանակութիւնը և իրաւունքները, մանրամասն պարզեց պարլամենտի գործունէութեան սահմանները, պատգամաւորների թիւը և իրաւունքները, օրէնսդրութեան վերաբերեալ իրաւունքները, երկրի ներքին օրէնքների չափը, արտաքին գործերի մէջ ունենալի նշանակութիւնը, հարկերի, առևտրական, զինուորական, և ներքին զանազան գործերում տրուելի իրաւունքները։—Բացատրութիւնները երկար տեւեցին։ Ճառի ժամանակ մի քանի անգամ համակրական ցոյցեր գործեցին պարնէլիստները։

Միւս օրը Լօնդօնի լրագիրները նուիրելով այդ խնդրին բազմաթիւ էջեր, յայտարարեցին որ Գլադստոնի նախագծի ընդունելը սպառնում է Մեծ-Բրիտանիայի միութեանը։ Հողերին վերաբերեալ նախագծի ընդունելը աւելի գրգռեց Իրլանդիայի հակառակորդներին։ Այդ նախագծերին ընդդէմ են մինչև անգամ «Times», «Standard», «Daily Telegraph» լրագիրները։ Մինչև անգամ մինիստրական օրգան «Daily News» լրագիրն էլ ուղղակի ոչինչ չասելով՝ առաջարկում է միայն առանց կրքի շարունակել հարցի ուսումնասիրութիւնը և մշակութիւնը։

Գլադստոնի հակառակորդների դրութիւնը դըժուար է. նրանք չը գիտեն ինչ անել։ Շատերը կարծում են, որ Գլադստոնը նոր ընտրութիւններ կը նշանակի, եթէ իր նախագծերը չընդունվին։ Հիմք կայ կարծելու որ նոր ընտրութիւններն էլ Գլադստոնի օգտին մեծամասնութիւն կը ներկայացնեն։ Սակայն խնդիրը ընտրութիւնների վրա չէ հիմնված. Իրլանդիան և իրլանդացիները տենդային դրութեան մէջ են, և իրանց կեանքի և մահվան խնդիր են համարում ներկայ նախագծերի վիճակը։—Գլադստոնի նախագծերի հակառակորդները լաւ գիտեն թէ Իրլանդիայի մէջ այժմ ինչ տրամադրութիւն է թագաւորում։ Ապստամբութիւնը և սարսափելի խառնակութիւնները անխուսափելի կը լինեն, եթէ Գլադստոնի նախագծերը անյաջողութիւն կունենան։ Ներկայ ծանր դրութեան աւելի սարսափելի հետևանքներն են, որ զգուշացնում են ամենքին։ Եւ յոյս կայ, որ երբ Գլադստոն կը պարզի իր միտքը թէ իր նախագիծը չի սպառնում պետութեան միութեանը, այն ժամանակ համայնքների ժողովը կը շարունակէ իր համաձայնութիւնը ցոյց տալ, և դրանով կը բացվի այն ճանապարհը, որ կը տանէ թէ Իրլանդիան և թէ ամբողջ Անգլիան դէպի խաղաղութիւն և դէպի կանոնաւոր զարգացումն։

### ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԻՑ

—

Կայրո, 29 մարտի

Նախընթաց երեքշաբթի առաւօտ, խտիվական Քասր-Ալի մեծ պալատի մէջ մեռաւ ներքինեաց պետը (հարէմաղա) Հայտար, ՝ի հասակի 65 ամաց։ Հանգուցեալը իր առատաձեռնութեամբ, բարի, հեզ բնաւորութեամբ ծանօթ էր գրեթէ բոլոր կայրեցւոց. մօտ 3,000 արտավար ընտիր հող և ուրիշ շատ մը գոհարեղէն հարստութիւններ կը թողու, զորս հաւանական է որ իր ներքինի որդեդիրները ժառանգեն։

Յուղարկաւորութեան հանդէսն որ կատարվեցաւ նոյն օրն, երեկոյեան դէմ, ըստ մահմետականաց ճաշակին, բաւականին փառաւոր էր։

Նիւթական ամեն միջոցներով օժտեալ արաբք, փառք, պատիւ կը համարեն եթէ իրենց մահուանէ վերջ, լալկան կանանց բազմութիւն մը իրենց դագաղին շուրջ սգոյ պարանոց յօրինէ. սակայն ներքինեաց այս պետը, որ ինքն ալ գերի ներքինի մէր, ժամանակաւ Սուդանէն բերված, բոլորովին այդ դասուն հակառակ, տարբեր դաղափար մ՚ունէր։ Իրեն այցելութեան գնացող բարեկամաց միշտ ըսած կը լինի թէ.—«երբ մեռնիմ, յուղարկաւորութեանս հանդիսին չըլլայ որ լալկան կիներ բերել տաք. դուք գիտէք ինչ բնաւորութեան տէր լինելս. աւելորդապաշտութիւն չեմ սիրեր ես։» Արդարև հանգուցելոյն այս խնդիրը թէպէտ կատարված էր, լալկան կիներ չը կային, բայց դարձեալ հանդէսն մի քանի տեսակէտներէ յոյժ անախորժ կերպարանք մը կը զգենուր։

Երևակայեցէք, ահա դագաղին առջևէն կերթան վեց ուղտեր, որոնց իւրաքանչիւրն կը կրէ երկու կողովներ լի հացերով։ Ուղտապանք այդ հացերն աղքատաց կը բաժանեն, բայց ոչ կանոնաւոր կերպիւ, որովհետև զիրենք պաշարող երկսեռ աղքատաց թիւ, համար չը կայ։ Մին կոյր, մին կաղ զիրար հրելով, հրմշտկելով կը գոչեն որքան կը ներէ կոկորդնին. «ահա սիյատի է՛, ահա սիյատի է՛» (տէր իմ հաց, տէր իմ հաց)։ Իսկ հաց ցրուող ուղտապանք, զայրացած այս բացականչումներէն, մանաւանդ ուղտաց առջև ճանապարհ բանալու համար, մտրակով աջ ու ձախ առանց նայելու, աչք, քիթ, բերան, գլուխ չեն խնայեր երբէք, բամբակի պէս կը ձգեն մերթ ընդ մերթ պատառմը հաց խիստ հեռուն նետելով, որպէս զի բազմութիւնը հոն խռնուի և իրենք պահ մը ազատ շունչ առնուն։ Այդ տեսարանին ահա կը յաջորդէ ուրիշ տեսարան մ՚ալ։ Բոկոտն, մերկ երեք հարիւրէ աւելի չէլեր (կրօնականը) անսերդաշնակ կերպով «Լա-իլա իլ-Ալլա» (այսինքն ամեն բան ոչինչ, միայն Աստուած) կերգեն անդադար ու կանցնեն։

Կուգան խնկարկուք. ստուար մեծամասնութիւն մ՚ալ ասոնք կը կազմեն, բայց չեն երգեր, լուռ, անձայն խունկ ծխելով կընթանան իրենց հետևող ունենալով փոքրիկ աղայոց ահագին խմբակ մը, որ դարձեալ անսերդաշնակօրէն «Լա իլա իլ-Ալլա» կերգէ։

Այս ամենէն յետոյ կերևի դագաղը, ներքինիներէ, էֆէնդիներէ և բէկերէ շրջապատեալ։ Առաջինք յոյժ բազմաթիւ են, ՝ի հարկէ ստիպեալ փութացած են իրենց պետին թաղման հանդիսին ներկայ գտնուիլ։ Միշտ կարտասուեն, որովհետև ամենքն ալ շատ թէ քիչ վայելած են նրա բարիքը. բայց առ նա երախտապարտ մընալնին ոչ պիսի միջոցաւ ցոյց պիտի տային ժողովրդեան. ոչ ապաքէն նրա դագաղը թռչունի պէս օդին մէջ թռցնելով, կամ թէ միմեանց ձեռքէ յափշտակելով։ Եւ այդ պատճառաւ արդէն մեծ կռիւ մ՚ալ տեղի պիտի ունենար։ Ներքինիին մէկը հեռուէն ինչասպառ կը վազէր, որպէս զի դագաղին շուտ հասնի. անշուշտ ինքզինք մոռցած ըլլալու էր այդ պահուն. լաւ ուշադրութիւն չը բրաւ, դագաղին դեռ չը մօտեցած իր ոտքերուն տակ ճզմեց բէկի մը ոտքերն. բէկն ալ կերևի թէ հայաստանցի թիւրք մ՚էր, ներքինիի ոչ մի ներողութեան ձայնին ականջ դրաւ։ «Էմշի ա՛ հա իպն իլ-Քէլբ» (կորիր շան զաւակ) ըսելով ծոծրակին փառաւոր ապտակ մը խփեց, ապտակ մը, որուն արձագանքը բոլորին ուշադրութիւնը գրաւեց. և ամեն կողմէ ներքինիք բէկի դէմ սկսան ցոյցեր ընել, այլ բարեբաղդաբար մէկ երկու շէլերու չնորհիւ ամեն բան շուտով անհետացաւ, և դագաղն ալ արդէն Սէյիդ Ալի Զէյնում մզկիթի բակին մէջ, գերեզմանին ափին կանգնած էր։

Շէլերու խռպոտ, անախորժ ձայները դեռ կը հնչէին, երբ մենք Հայտար աղային տալով մեր հըրաժեշտի ողջոյնը, հեռացանք դէպի Էօզպէքիէ, ուր ինչ տեսանենք. ամեն յունաց խանութներն զարդարեալ յունական երկգոյն (կապոյտ, ճերմակ) դրօշակներով ու պատերազմական պատկերներով։ —Ի՞նչ է այս, հարցուցինք յոյնի մը։ Ցոյնը պատասխանեց գոռոզութեամբ. մեր ապստամբութեան 59-րդ տարեդարձի օրն է այսօր։—Լաւ ուրեմն, ըսինք. ամեն տարի յաղթական երգերով փողոցէ փողոց կը պտտէիք, նաւագներու ձայներէն

ականջնիս կը խլանար, ինչու՞ այս տարի այսպէս լուռ էք, չը պոռաք, չը կանչէք։—Անգլիան, գոչեց բարկութեամբ, Անգլիան, մեր սիրերիմ թշնամին, կը նախանձի մեր հայրենասիրութեան, չուզեր որ ամէն տարուայ պէս տօնենք մեր ամենուս սիրելի այս սուրբ օրը։ Ծանուցագիր մը ղրկած է երէկ մեր հիւպատոսարան, խստիւ կարգելէ եղեր ըսելով թէ անկարգութեան տեղի պիտի տաք, վաղը ձեր ապստամբութեան տարեդարձը եթէ տօնէք։ Սակայն որո՞ւ հոգ, մենք ամենեին մահէ երգիւղ չունինք. դարձեալ պիտի տօնենք, նուագոյ, երկոց ձայները պիտի հնչեցնենք կէս ժամ վերջ։—Եւ իրաւ կէս ժամից յետոյ տեսանք որ յոյն երիտասարդք դրօշ 'ի պարզ, յաղթական երգերով փողոցէ փողոց ման կուգան, գունաւոր փամփուշտներ կարձակեն յօդս «կեցցէ Յունաստան» աղաղակներով. կանայք պատուհաններէն ծաղկանց փունջեր կը թափեն երիտասարդաց վրա։

Թէև ուրիշ պատճառաւ, հայոց բոլոր շրջաններումն ալ մեծ ուրախութիւն կը տիրէր ներկայիս շաբաթ մ'առաջ։ «Առաջնորդը կուգայ» ամէն հայ կըսէր ու կը հրճուէր։ Այր, կին խառն, ոմանք կառքով, ոմանք ոտով թափած էին երկաթուղոյ կայարանը. անհամբեր շոգեկառքի գալստեան կը սպասէին։ Արաբացիներէն շատերն «է հ տի» (ինչ է այս) կը հարցնէին միմեանց զարմանաք և վայրկեան մը լուռ ամբոխին դիտելով կը տեսնէին որ իրենց համար բան մը չը կայ, կառնէին, կը քալէին։ Վերջապէս չերկարացնենք. շոգեկառքն սուլեց, և գեր. առաջնորդին չնորհավայլ դէմքն երեցաւ։ Թաղական խորհրդոյ անդամք սրբազանին աջն համբուրելով կառքին մէջ տեղաւորեցին զառաջնորդն։ Կառքը հեռացաւ, ժողովուրդն ալ գեր. առաջնորդին դէմքը վերստին տեսնելու համար նեղ, մօտիկ փողոցներէն դէպի առաջնորդարանի դուռն սկսաւ վազել, բայց 'ի զուր, որովհետև գեր. առաջնորդն հասած էր առաջնորդարան, և ազգային ընկերութիւններէն չնորհաւորական պատգամաւորութիւններ կընդունէր։ Այդ պատգամաւորաց առաջինը կրնար հաշուիլ «Ցառաջդիմասէր Ընկերութեան» պատգամաւորութիւնը, որի վրա, կարծեաք, գեր. առաջնորդը առանձին ուշադրութիւն դարձուց։

«Ցառաջդիմասէր Ընկերութեան» ծնունդը արդէն ծանուցած եմ ձեզ։ Այդ ընկերութիւնը եւրոպաբնակ հայոց ընկերութեան ճիւղերէն մին է։ Նպատակը հայոց մտաւոր ու բարոյական զարգացումն ըլլալով, աւելորդ է պարզել։ Անցեալ կիրակէ չքեղ հանդէս մը ունեցաւ 'ի Խորէնեան վարժարան, ուր ներկայ էին յայտնի ընտանիքներ։ Ճառախօսութիւններ եղան, երգեր երգուեցան, օրիորդ մը «Աղատ Աստուած» ու Դուրեանի «Նոր Սեւ Օրեր» բանաստեղծութիւնք արտասանեց։ Հանդէսի բուն պատճառն էր ընկերութեան գոյութեան նոր մղում մը տալ։ Մեր լսածին համեմատ հանդէսն բաւական արդիւնաւոր եղած է. 50 հոգիէ բաղկացեալ անդամոց մեծամասնութիւն մը շահած է նոյն օրն ընկերութիւնը։ Ոմանք երկու, ոմանք երեք բուրլի ամսէ ամիս հատուցանելու հաճութիւն տուած են։

Գահիրեցի

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզի լրագիրները հաղորդում են, որ Տունիսի մէջ սկսված է ապստամբութիւն տեղացիների կողմից, որը հետևանք է ժողովրդեան դէպի իշխանութիւնը ունեցած դժգոհութեան։

—Բելգրադից հեռագրում են լրագիրներին, որ իբրև թէ ազատամիտ և արմատական կուսակցութիւնները ընդունեցին քաղաքական մի ընդհանուր ծրագիր, և կազմեցին մի ընդհանուր ազգային կուսակցութիւն։

—Ապրիլի 4-ին կարդացվեցաւ Իրլանդական հողերը գնելու խնդրին վերաբերեալ Գլադստոնի նախագիծը։ Գլադստոնը երկար ճառ խօսեց, և ուզում էր համոզել որ այդ միջոցը չէ սպառնում պետութեան միութեանը, այլ դա կը լինի Իրլանդացիների բարեկամութեան հիմքը։ Իրլանդիայում եղած հողային խառնակութիւնները հետևանք են հողատէրերի կամայականութեան։ «Մենք չենք կարող պատասխանատու չը լինել տխուր եղելութիւնների համար, ասաց Գլադստոնը։ Իրլանդացի կալուածատէրերի արարմունքը մի ծանր բեռ է մեր խղճի վրա։ Ունենալով մեր ձեռքին իշխանութեան դեկը, մենք սառնասրտութեամբ նայեցինք կալուածատէրերի բռնութիւնների և ժողովրդեան չկրած նեղութիւնների վրա։ Այդ հակառակ է արդարութեան. դա մեզ պատիւ չէ բերում»։

—Ապրիլի 10-ից հեռագրում են «Հիւսիսային գործակալութիւնը» Աթէնքից, որ այդտեղի կառավարչական շրջանները համոզված են թէ Ֆրանսիան բարեմտութեամբ կը վերաբերվի դէպի Յունաստանի պահանջները։ Պատերազմական մինիստրը զննելով սահմանի վրա կանգնած զօրքը, տեղեկացնում է, որ զօրքը գտնվում է ամենալաւ տրամադրութեան մէջ և ունի անհրաժեշտ պիտոյքներ։ Վճռված է սահմանի վրա երեք բանակ կազմակերպել։ Դրօշակի տակ են կանչվում պահեստի զօրքի վերջին դասակարգերը։

—Կ. Պոլսից հեռագրում են մեզ ապրիլի 10-ից, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նելիդով և Աթէնքի ռուսաց դեսպանը ուղևորվեցան դէպի Լիվադիա։ Սէրվէր-փաշան նոյնպէս պէտք է ուղևորվէր Լիվադիա, բայց նրա տկարութեան պատճառով, նրա տեղը գալու է Էդհէմ փաշան, նախկին մեծ վիզիրը։

—Սոֆիայից «Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ, որ Շաքիր-փաշան հասաւ այդտեղ, բերելով իր հետ սուլթանի ֆիրմանը, որով Ալէքսանդր իշխանը նշանակվում է Արևելեան Ռումելիայի գեներալ-նահանգապետ։ Այդ ֆիրմանը Շաքիր-փաշան յանձնեց իշխանին, հանդիսաւոր ընդունելութեան ժամանակ։

—«Ռէյտերի գործակալութիւնը» հաղորդումն Լոնդոնից, որ պետութիւնները պահանջում են Յունաստանից, որ նա որոշ ժամանակամիջոցում զինաթափ լինի։

—Աբանական օգնական զօրքերը պատրաստվում են գնալ դէպի յունական սահմանները։

—Թէսալիայում կենտրոնացած են 100,000 յունական զօրքեր։ Ցունաց թագաւորն էլ պատրաստվում է ուղևորվելու դէպի Թէսալիա։

—«Հիւսիսային գործակալութեան» հեռագիրը հաղորդում է հետևեալը։ «Փարիզի լրագիրներից մէկի հաղորդած այն լուրը, որ, իբր թէ, ֆրանսիական դեսպան Ապպերի Պեսերբուրգից յետ կոչումը կապ ունի Ֆրանսիական կառավարութեան կողմից անարխիստ Կրապոտկինին չընորհված ներման հետ, բոլորովին անհիմն է»։

—Փարիզից հեռագրում են ապրիլի 10-ից հետևեալը։ «Պատգամաւորների ժողովը 301 ձայների մեծամասնութեամբ 151 ձայնի դէմ ընդունեց 1889 թուի Փարիզի համաշխարհային հանդիսի նախագիծը»։

—Մեզ հեռագրում են Լոնդոնից, որ ապրիլի 11-ին արմատական կուսակցութեան պարագլուխ Լաբուշէրի նախագահութեամբ կայացած միտինգը համաձայնութիւն յայտնեց Գլադստոնի քաղաքականութեանը իրլանդական հարցի վերաբերմամբ։

—Աթէնքից հեռագրում են, որ թիւրք-յունական սահմանի վրա երկու պետութիւնների առաջաւոր զօրքերի մէջ աննշան հրացանաձգութիւն եղաւ, որ սակայն ոչինչ հետևանքներ չունեցաւ և երկու կողմից էլ ոչ ոք չը վիրաւորվեցաւ։

—Գերմանական, անգլիական, իտալական և աւստրիական նաւատորմիղ ուղարկեցին մի մի զրահակիր նաւ դէպի Պիրէյ։

—Վիէննայից պաշտօնապէս հեռագրում են, որ Գալիցիայի՝ Բաքնիա և Գօրլից շրջաններում խռովութիւններ ծագեցան գիւղացիների մէջ, որոնց մէջ մնոտիապաշտ լուրեր են տարածվում շուտով լինելու աշխարհի վերջանալու մասին, նոյնպէս և ճորտութեան վերականգնման մասին։

—Ֆրանսիան բարեկամական, բայց եռանդոտ կերպով խորհուրդ է տալիս Յունաստանին զինաթափ լինել, առանց սպասելու պետութիւնների հաւաքական վերջնագրի։

—«Journal de St. Petersbourg» լրագիրը հաղորդում է, որ բոլոր պետութիւնները ընդունեցին Անգլիայի առաջարկութիւնը՝ ներկայացնել Յունաստանին մի հաւաքական վերջնագիր, Յունաստանին պարտաւորացնելու զինաթափ լինել։ Լրագիրը համոզված է, որ կատարելով Եւրոպայի կամքը, Յունաստանը աւելի իրաւունք կունենայ սպասել ապագայում իր մասին հոգացողութեան և յոյս է յայտնում, որ այս անգամ պետութիւնների ջանքերը, վերջապէս, աջողութեամբ կը պըսակվեն։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սրանից մի քանի տարի առաջ լրագիրներում յայտարարվեցաւ, թէ դանձակեցի Յովհաննէս անունով մի երիտասարդ, որը ծառայում էր Թիֆլիսում, իր բարեկամի դարբնանոցում, կորել է։ Կարծում էին շատերը թէ նրան փախցրել են Պարսկաստան... 1884 թուին այդ կորածին գտան, մօր, եղբայրների և բարեկամների կարծիքով։ Ահա թէ ինչպէս։ Պարսկաստանի Ուրմի գաւառի Ներքնվլու գիւղացի մի պարսիկ երիտասարդ, որը երկար ժամանակ Շուլաւերում մշակութեամբ և հացթուխութեամբ էր պարապում, 1884 թուին գնում է Գանձակ քանելու համար։ Մի օր այդ պարսիկ երիտասարդը փողոցում կանգնած խօսում էր իր ընկերների հետ։ Յանկարծ մօտ է վազում մի երեխայ, և փաթաթվելով պարսկի վզին, աղաղակում է ուրախացած. «Օհանէս-ջան, ո՞ւրտեղ էիր այսքան ժամանակ»։ Պարսիկը սկզբում զարմանում, յետոյ բարկանում է իրան անծանօթ երեխայի վրա։ Երեխան վազում է տուն և յայտնում եղելութիւնը։ Գալիս է մեծ եղբայր Յարութիւնը ու գրկելով երիտասարդին, մեղադրում է ասելով՝ «օխտը տարի մեր աչքը ճամփիա»։ Գտնվածը հայերէն դիտէր խօսել։ Նա բացատրում է, որ ինքը պարսիկ է և ոչ թէ հայ,—երբ իմանում է թէ ինչ են ուզում իրանից։ Դրան հետևում է այն, որ կռիւ է սկսվում։ Պարսիկները կարծելով, որ երիտասարդին ուժով ուզում են հայացնել, յուզվում են։ Միջամտում է ոստիկանութիւնը։ Ցեմնողները ասում էին, որ ճիշտ Յովհաննէսն է, կարծես մի «խնձոր լիներ կէս արած»։ Ոստիկանատանը եղած ժամանակը գալիս է Յովհաննէսի մայրը։ Ամենքը տեղ են տալիս, որ իմանան թէ արդեօք ճանաչում է։ Պառաւ մայրը ընկնում է պարսիկ երիտասարդի վրա, համբուրում, գրկում, և ապա լաց լինելով ասում է. «օխտը տարի ա ոչ կերածս ա կերած, ոչ խմածս. էն ա մին դարար աչքս ճամփին էր»։ Ոստիկանապետը հարցնում է մօրից, թէ արդեօք մի նշան ունի իր որդու վրա։ Մայրը պատասխանում է, որ բթամատը այրված է, իսկ ոտն էլ չունն է կծել։ Խալոյն նայում և տեսնում են, որ մօր ասածները ճիշտ են։ Այդ ժամանակ միայն պարսիկները հանդարտում են։ Գտնվածից պահանջում են անցագիր. նա ասում է, որ կորցրել է։ Քիչ-քիչ ամենքը համոզվում են, որ, յիրաւի, դա Յովհաննէսն է։ Պարսիկը պնդում էր, որ իր մատը այրուել է այն ժամանակ, երբ ինքը հացթուխ էր, և իր ոտը չան կծած չէ, այլ այդ վերքը կարմիր քամու հետևանքն է։ Սակայն խորամանկ պարսիկը վերջումը ասում է. «եթէ ուզում էք, շատ լաւ. համաձայն եմ. ես մի խեղճ մարդ եմ. ով չի ուզիլ, որ պատրաստ հացը ուտի և ուրախանայ»։ Վերջապէս, գտնուածին տանում են տուն։ Հայերի մէջ շատ մնացած լինելով, կեղծ-Յովհաննէսը սովոր էր գինի էլ խմել և խոզի միս էլ ուտել։ Յովհաննէսի ծնողքը խնջոյք են կազմում և ուրախանում իրանց որդու գտնուելու պատճառով։ Մայրը աղջիկ է փնտռում իր գտած Յովհաննէսին պսակելու համար։ Խնդիրը են տալիս հոգևոր կառավարութեանը, որ նրան նորից մկրտեն, բայց հոգևոր կառավարութիւնը մերժում է, ասելով որ «մեր եկեղեցին կրկնամկրտութիւն չէ ընդունում»։ Կեղծ-Յովհաննէսը սովորեց միշտ եկեղեցի գնալ. մինչև անգամ հաղորդվեցաւ։ Մի քանի ամսից յետոյ ծնողքը նրան ուղարկեցին կրկին Թիֆլիս, որ իր դարբնագործութիւնը կատարելագործի և նորից վերադառնայ և ամուսնանայ։ Վարպետը տեսնում է, որ սա թէև նման է Յովհաննէսին, բայց արհեստը բոլորովին չը դիտէ։ Մի քանի ժամանակից յետոյ գալիս է պարսկի փոքր եղբայրը և միշտ լաց լինելով կրկնում էր. «ինչո՞ւ հայ ես դառնում. քեզ կը սպանեն պարսիկները»։ Տեմնող չուլաւերցիներն էլ վկայում են, որ դա պարսիկ է։ Վարպետը թողնում է կեղծ-Յովհաննէսին իր կամքին և մօրն էլ գրում է. «խաբուած էք, դա ձեր որդին չէ. նա ձեզ խաբում է»։ Իսկ մայրը միշտ կրկնում էր. «հայ է, Նաարանի, իմն է»։ Կեղծ-Յովհաննէսն էլ երկար մտածում է, և յիշելով, որ եթէ իսկական Յովհաննէսը գտնուի, իր գլխին «օյին կը բերեն», վճռում է այլ ևս չը վերադառնալ իր կեղծ-ծնողաց մօտ...

* * *

Պրուսական կառավարութիւնը մտադիր է ուղարկելու Փարիզ պ.պ. Վիրխովին և Քոխին, որոնք պիտի ուսումնասիրեն Պաստեօրի մօտ ջրրվախութիւնը բժշկող միջոցները։

* * *

Կոնեկտիկուտի սենատը մի նոր օրէնք հրատարակեց, որով պարտաւորեցուցիչ է կացուցանում ոգելից ըմպելիների և ծխելու վնասակարութեան մասին դասախօսելը հասարակական ուսումնարանների մէջ։

* * *

Նորերումս գերմանական մի քանի գիտնականների չնորհիւ մի բոյսի մէջ գտնուեցաւ մագնիսական-էլեքտրական ոյժ։ Բոյսը ստացել է Phytolacca electrica անունը։ Մագնիսական սլաքը այս բոյսի ներկայութեամբ տատանվում է և ձգվում։ Զօրութեան ոյժը օրուայ մէջ միատեսակ չէ. maximum լինում է կէսօրից յետոյ ժամի 2-ին, minimum լինում է գիշերին։ Կայծակը մեծ ազդեցութիւն է անում բոյսի մագնիսական զօրութեան վրա։ Այս բոյսի վրա երբէք չէ պատահել տեսնել թուչուն կամ մի որ և է միջատ։ Հետաքրքիր ապագայ ունի այդ բոյսը գիտութեան համար։

* * *

Թռչունների երկարակեցութեան մասին հետաքրքիր են հետևեալ թուանշանները։ Կարապը ապրում է մինչև 500 տարի։ 162 տարեկան բազէ տեսնված է։ Բանտարկված արծիւը ապրել է 104 տարի, բանտարկված ցինը ապրել է 118 տարի։ Թութակը ապրում է 100 և աւելի տարի։ Ագռաւը ապրում է 100 տարուց աւելի։ Բանտարկված կաչաղակը ապրում է 20—25 տարի, իսկ աղատութեան մէջ շատ աւելի։ Աքաղաղը ապրում է 15—20 տարի։ Աղաւնին ապրում է 12 տարի։ Սոխակը բանտարկութեան մէջ ապրում է 10 տարի։ Դեղձանիկը ապրում է 12—15 տարի, բանտարկված ժամանակը, ազատութեան մէջ շատ աւելի։ Ցորդիկը ապրում է 15 տարի։ Ֆասիանը ապրում է մինչև 15 տարի։ Հողային և ճահճային շատ թռչուններ ապրում են մարդկային մի քանի սերունդների կեանքի տարիներ։

* * *

Ամերիկական լրագիրները պատմում են մի հետաքրքիր գործադրելի մասին, որը արել են երեսունի չափ 12—15 տարեկան երեխաներ, որոնք ծառայում են եղել մի քաղցրաւէնիքներ պատրաստող մօտ։ Գործադուլ անողները ժողով կազմեցին, և երեք պատգամաւոր ուղարկելով իրանց «աղայի» մօտ, պահանջեցին աւելացնել ռոճիկը և քչացնել աշխատանքի ժամերը։ Հաստատուն 6 ֆուտ և 3 դիւյմ բարձրութիւն ունեցող «աղան» սկզբում արհամարհանքով ընդունեց փոքրիկ պատգամաւորներին, բայց տեսնելով որ գործադուլ անողները շատ հաստատ են իրանց խօսքի մէջ, համաձայնութիւն տուեց հարկաւորն անելու։

## „ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 ապրիլի։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ երէկ ուղևորվեց դէպի արտասահման։ Եալտայից ստացված պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ երէկ ժամանեց այդտեղ նախկին մեծ վիզիր Էդհեմ-փաշան սուլթանի կողմից Նոցա Կայսերական Մեծութիւններին չնորհաւորելու համար։ Դեսպանն ընդունվեցաւ մեծ պատիւներով։ «Journal de St. Petersbourg» լրագիրը Աթէնքից ստացած տեղեկութիւնը, վերջնագրի յանձնելու մասին, անճիշտ է համարում։ Լրագրի կարծիքով, անհաւատալի է երևում որ պետութիւնների ներկայացուցիչները արդէն երկուշաբթի երեկոյեան ներկայացրած լինէին վերջնագիրը, քանի որ Դէլիանիսի յայտնի տեղեկութիւնը ստանալուն պէս Ֆրէյսինէի հեռագրի մասին, ներկայացուցիչները վերջնագրի մատուցանելը յետաձգեցին մինչև երեքշաբթի, այն յոյսով, որ կը ստանան հրահանգներ, որոնք կը պայմանաւորվեն դրութեան փոփոխութեամբ, որ տեղի է ունեցել վերոյիշեալ տեղեկութեան պատճառով։

ԱԹԷՆՔ, 16 ապրիլի։ Միջազգային նաւատորմի հինգ նաւեր եկան Ֆալերնի ծոցը և Պիրէյ։ Ծովացոյցին մասնակցում է նոյնպէս ռուսաց մի նաւ, որ եկել է Տենեդոս կղզուց։

ԼՎՕՎ, 16 ապրիլի։ Արևմտեան Գալիչինայի գիւղացիների մէջ, տօների ժամանակ, տիրում էր կատարեալ խաղաղութիւն։

ԱԹԷՆՔ, 17 ապրիլի։ Պիրէյ հասած նաւերում ոչ մի ռուսաց նաւ չէ գտնվում։ Պետութիւնները յանձնեցին յոյն կառավարութեանը մի վերջնագիր. Դէլիանիսը դեռ չէ պատասխանել ցանկալով կանխապէս իմանալ թէ, արդեօք պետութիւնները չեն հրաժարվի վերջնագրից աչքի առաջ ունենալով, որ Յունաստանը արդէն ընդունել է Ֆրանսիայի խորհրդաւորութիւնը և պատրաստ է զինաթափ լինել։ Միջազգային նաւատորմի սպառնալիքի պատճառով, Յունաստանը մտադրվում է հիմա հրաժարվել զինաթափվելուց և կամենում է զինաթափվել միայն այն դէպքում, եթէ պետութիւնները կը վերադարձնեն իրան ներգործելու ազատութիւնը։

ՀՌՕՄ, 17 ապրիլի։ Պատգամաւորների պալատը արձակված է. նոր ընտրութիւնները նշանակված են մայիսի 11-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 ապրիլի։ Եալտայից ստացած պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ սուլթանի կողմից ուղարկած արտաքոյ կարգի դեսպան Էդհէմ-փաշան ընդունվեց թագաւոր Կայսրի կողմից Լիվադիայի պալատում մեծաշուք հանդէսով և դեսպանը մատուցեց Կայսրին սուլթանի ինքնագիր նամակը։ Կայսրը կրում էր թիւրքաց «Իմթիազի» շքանշանը, իսկ դեսպանը կրում էր ռուսաց Սպիտակ Արծուի շքանշանը։ Յետոյ դեսպանը ներկայացվեցաւ Նորին Բարձրութեան թագաժառանգին և ընդունվեցաւ թագուհի Կայսրուհուց։ Երեկոյեան դեսպանը հրաւիրված էր Բարձրագոյն ճաշին։ Այսօր երեկոյեան դեսպանը կը վերադառնայ։

ԱԹԷՆՔ, 17 ապրիլի։ Ռուսաց ոչ մի նաւ չէ մասնակցում ծովացոյցին։ Այստեղ տեղի ունեցաւ ժողովրդական մեծ ցոյց յօդուտ պատերազմի. բայց ոչ մի անկարգութիւն չը պատահեց։ Սակայն զգուշութեան համար մի քանի օտար դեսպանատների առաջ կանգնած էին պահապաններ։ Ինչպէս երևում է, վերջնագրի պատասխանը կը

ստացվի այսօր. պատերազմական մինիստրը տըվեց իր հրաժարականը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 ապրիլի։ Սկսած երկուշաբթի օրից, ապրիլի 21-ից, Պետերբուրգի մասնաւոր առևտրական բանկերը կը վճարեն ընթացիկ հաշիւներով՝ յատուկ և հասարակ չէկերով, նոյնպէս անժամանակ աւանդներով $2^1/_2$% տարեկան, փոխանակ նախկին 3%։

ԱԹԷՆՔ, 17 ապրիլի։ Պետութիւնների ներկայացուցիչները սպասում են տուած վերջնագրի պատասխանին Դէլիանիսի կողմից, իսկ եթէ մերժողական պատասխան ստանան, նրանք կը հեռանան նաւերի վրա։ Ռուսաց կլիպէր «Պլաստունը» միացաւ միջազգային նաւատորմի հետ. տասը օտար նաւեր անցուդարձ են անում Պելօպոնեզի արևելեան ջրերում։ Հիմա այլ ևս չէ կարելի կասկածել, որ բոլոր հինգ պետութիւնները, բաց չառնելով և Ռուսաստանը, հաւանութիւն են տալիս իրանց ներկայացուցիչների գործողութեան եղանակին։ Ֆրանսիական դեսպանը յայտնեց յոյն կառավարութեանը, որ Յունաստանը չը պէտք է յուսադրվի անպայման կերպով Ֆրանսիայի համակրութեան վրա և եթէ Յունաստանը շարունակէ յամառվել, այն ժամանակ Ֆրանսիան ստիպված կը լինի միանալ մնացեալ պետութիւնների հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի։ Պաշտօնական հեռագիրը Եալտայից հաղորդում է, որ չորեքշաբթի օր, Բարձրագոյն ճաշից յետոյ թիւրքաց դեսպան Էդհէմ-փաշային շնորհված է ս. Ալէքսանդր Նեվսկու պատանշանը։ Նոյնպէս շնորհված են պատանշաններ նրա սվիտայի անդամներին։ Երեկ Էդհէմ-փաշան գնաց Լիվադիա թագաւոր Կայսրին շնորհակալութիւն մատուցանելու և հրաժարական առաւ արտաքին գործերի մինիստրից և այլ բարձրաստիճան անձինքներից։

ԱԹԷՆՔ, 18 ապրիլի։ Դէլիանիս պատասխանել է վերջնագրի, որ Յունաստանը ընդունում է Ֆըրանսիայի խորհուրդները զինաթափ լինելու մասին, առանց ժամանակամիջոցի որոշման։

Կ. ՊՕԼԻՍ, 18 ապրելի։ Պետութիւններին ուղարկած շրջաբերականում Բ. Դուռը շնորհակալութիւն է անում պետութիւնների կողմից արած եռանդոտ ջանքերի համար խաղաղութիւնը պահպանելու վերաբերմամբ և յայտնում է որ Յունաստանի անյապաղ և անպայման զինաթափվելը կարող է իրան գոհացնել և պարտաւորեցնել հրաժարվելու վարձատրութիւն ստանալու իրաւունքից, այն անադին գոհաբերութիւնների փոխարէն, որ Բ. Դուռը պէտք է կրէր Յունաստանի զինաւորվելու պատճառով։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ցանձն է առնում թարգմանել ֆրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից մատչելի գներով։ Հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը։

16—100

**ԿՕՓԷ ՄՕԿԿՕ**

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 4907) 7—50 (2)

Գոլովինսկի պրոս. վրա, Զիմախովի տանը, Մուզիկային ընկերութեան տակը, կերասունդից եկած և թիֆլիսում դեռ չը տեսնված **18 ՏԱՐԵԿԱՆ ՀՍԿԱՅ** պատիւ ունի ներկայանալու յարգոյ հասարակութեանը։ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ 3 արշին և $5^1/_2$ վերշոկ է, ՀԱՍՏՈՒԹԻՒՆԸ 141 սանտիմետր, ԿՇՌՈՒՄ է 11 պուդ, ԳԼԽԻ շրջագիծը 67 սանտիմետրը, երկու ՁԵՌՔԵՐԻ միջի տարածութիւնը 245 սանտիմետր։ Սենեակը բաց է ամեն օր, առաւօտեան 10—4 ժամ և երեկոյեան 6—10։ Մուտքն արժէ 50 կոպ. երեխաները և ստորին աստիճանաւորները վճարում են 25 կոպ.

ՍՊԻՐԻԴՈՆ ՍՈՒՐՄԷԼԻ 2—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
„MESSAGERIES MARITIMES"
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Հինգշաբթի 1-ին մայիսի DONNAI (ԴՕՆՆԷ) շոգենաւը, նաւապետ SIBILET (Սիբիլէ) դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ ուղիղ ըէյսով դէպի ՄԱՐՍԷԼ, Կ. Պօլսի, Զմիւռնիայի, Եաֆայի, Պօրտ-Սէյիդի և Ալէքսանդրիայի վրայով։

Իսկ ապրիլ ամսի վերջին օրերում ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնան ուղիղ ըէյսով դէպի ԱՆՏՎԷՐՊԷՆ և ՀԱՄԲՈՒՐԳ՝ գերմանական շոգենաւ BAHRENFELD (Բարենֆէլդ), նաւապետ HEINRICHS (Հէյնրիխս) և անգլիական մի շոգենաւ դէպի ԱՆՏՎԷՐՊԷՆ և ԼՕՆԴՕՆ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԷԼԼԷՐՍ ԲՈՒՐԿՀԱՐԴԻՆ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒՐԵԱՆ ՀԵԶՈՒՐԵԱՆՑԻՆ։

1—4

ՎԻԵՆՆԱ **ԱԶԴ** ԱՒՍՏՐԻԱ

ԳՐԵԹԷ ՈԶՆՁՈՎ

Կարելի է առնել սեղանի գեղեցիկ ԱՆՕԹՆԵՐ, 42 կտոր, միայն 18 ֆրանկ 75 սանտ. Առևտրի դադարման պատճառով, ծախու հանված են ՀԱԼՖԷՆԵԱՆ արծաթէ պատրաստված անօթներու ահագին քանակութիւններ, սովորական գնէն 25 առ 100 զեղչով։ Արտադրութիւն են Հալֆէնեան արծաթեղէններ պատրաստող Միացեալ Ընկերութեանց, որք մնանկացած են այժմ։

Միայն 18 ֆրանկով և 75 սանտիմով ստանալի, ինչ որ յառաջագոյն 60 ֆրանկով կը ստացվեր։ Կը ղրկեմք Հալֆէնեան արծաթէ պատրաստեալ սեղանի հետևեալ անօթներն, որք արտաքոյ կարգի ընտիր և դիմացկուն են։

| | | | |
|---|---|---|---|
| 6 | հատ | սեղանի գեղեցիկ դանակներ | Հալֆէնեան արծաթէ |
| 6 | „ | պատառաքաղներ | „ „ |
| 6 | „ | ապուրի մեծ գդալներ | „ „ |
| 6 | „ | սուրճի սիրուն գդալներ | „ „ |
| 1 | „ | ապուրի խոշոր և ծանր գդալ | „ „ |
| 1 | „ | կաթի մեծ գդալ, շատ նուրբ | „ „ |
| 3 | „ | հաւկիթի գեղեցիկ և թանձր անօթներ | „ „ |
| 2 | „ | սկաւառակներ թէյամանի համար | „ „ |
| 1 | „ | թէյի գեղեցիկ թորիչ | „ „ |
| 1 | „ | գեղեցիկ պղպեղաման, կամ շաքարաման | „ „ |
| 3 | „ | շաքարի շքեղ թասեր | „ „ |
| 6 | „ | գեղեցիկ դանակակալներ | Բիւրեղէ |

Սպիտակութիւն երաշխաւորեալ 10 տարի։

Ընդունելու համար այս 42 անօթներն ֆրանկօ և ուղղակի բնակարանը, 4 կամ 5 օրվայ մէջ, հարկ է ուղարկել 18 ֆրանկ 75 սանտիմ ընդհանուր մթերանոցը Հալֆէնեան արծաթեղէններու Միացեալ գործարանաց, այս հասցէով

M. RUNDBAKIN 2 B. Hedwiggasse
VIENNE (Autriche)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Դրամը կը հատուցվի, երբ վաճառքներն չը յարմարին։ Հայերէն լեզուաւ նամակներ կընդունվեն։ 1—18 (շ)

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԻ
(ՀԱՅԿԱԿԻ)

**ՆՈՐԱՎԷՊՔ**

Երեք փոքրիկ վէպիկներ մի գրքոյկի մէջ

ա. Դատապարտեալը
բ. Երազի մը գինը
գ. Կատակ մը

Գինը 50 կոպէկ է։ Արտաքին քաղաքներից պէտք է ուղարկեն նմանապէս 15 կոպ, ճանապարհածախս։

Վաճառվում է բացառապէս. ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ։ Հասցէն. Тифлисъ. Центральная книжная торговля. 1—5

**„ԱՂԲԻՒՐ"**

Լոյս տեսաւ № 4 (Ապրիլ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ մանուկներին շնորհաւոր Զատիկ (ոտանաւոր) Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ։—Գարնան մեծ տօները (յիշողութիւն) ՀՐԱՀԱՏ։—Որբի Զատիկը (ոտանաւոր) ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ։—Բումբում (ծիւլ Քլարքտի) Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ։—Սոխակներ (Կրիլովից) Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ։—Երգիչ աղան. Լ. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ։—Ծերունի Սարգսի յիշատակարանից. Յ. ԴՈՒՐԲԱԽԵԱՆ։—Խելագար Բէսսօ (օսական աւանդ. Վ. Սօլովիեվի) Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿԻՒԹԻՒՆՆԵՐ։ Կարմիր անձրև։—Տպագրութեան տպարան։—Նոր տեսակ անձրևապահ։—Նոր գրիչ։—Փայտէ գիրք։

ԱՅԼ և ԱՅԼՔ։ Նամակագրութիւն ծիծեռնակի միջոցով. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ։—Քաջասիրտ օրիորդներ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ։ Աշակերտը բնագիտութեան դասին։—Հանելուկներ։—Օղակախաղ։—Նախընթաց №-ի հանելուկների բացատրութիւնը։—Յայտարարութիւններ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ։ Հասօի երգ (Բաֆֆիի) ձայնագրեց Ղ. Ք. Յովսէփեան։

1—2

Մի ռուս տիկին, ցանկանում է դաստիարակչուհու (գուվերնանտկայի) պաշտօն ստանալ մի ընտանիքում։ Գիտէ բացի ռուսերէնից, ֆրանսերէն և գերմաներէն լեզուները և երաժշտութեան սկզբունքները։ Դիմել Թիֆլիսում, Սերեբրեանի Բիւրգ փողոցը, տուն № 27, ադվոկատ Մարցինկեվիչին։ 2—2

ԹՈՅԼՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկտիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կոսմետիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։ Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», դերազանց միջոց կաշու սմնն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ., առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Ռիս-Գուտմանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

28—100

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է կենտ. գրավաճառանոցում, եղբարց Ծօվիանօվների բանկային դրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Лабораторная, № 11։ Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով С. П. Мануэльянцу.

Գինն է ամեն տեղ 2 բուբլի։

14—30


Дозволено цензурою, Тифлисъ 18 Апрѣля 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.